ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

19.11.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 գնման պայմանագրի

ք. Երևան 24.02.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշումը և Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 19.11.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին հաստատել 2021թ. հատկացված գումարի շրջանակներում մատուցման ենթակա ծառայությունների վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան, Աբովյան 29 շ., 15 բն.
կառավարական տուն 3	<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 16600057361700
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01553657
Հ/Հ 900011036176	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Վ. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
19.11.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 գնման պայմանագրի
24.02.2021թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	-	-	-	15 004 000	15 004 000	15 004 000	15 004 000	15 004 000	15 004 000	15 004 000	15 004 000	15 004 000	15 004 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036176
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Մ. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 29 շ., 15 բն.
<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16600057361700
ՀՎՀՀ 01553657

Տնօրեն՝

_____ Վ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

evocaBANK

Հավելված N 4
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N 1585/21
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Էվոկաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **16,492,000.00 /տասնվեց միլիոն չորս հարյուր իննսուներկու հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, ոչ ավել քան 24.07.2021թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 1585/21 1660139738

Date 23.02 2021

evocaBANK

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ARMENIA, "EVOCABANK" CJSC
evocaBANK
20001182

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Էմմա Ջանինյան

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 1585/21 1660139738

Date 23.02 2021

evocaBANK

Հավելված 5
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԵՐԱԾԽԻՔ N 1586/21
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով «Էվոկաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,500,400.00 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, ոչ ավել քան 24.07.2021թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/33** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 1586/21 1660139739

Date 23.02 2021

evocaBANK

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
ARMENIA, "EVOCABANK" CJSC
evocaBANK
00001182

Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ՝ Էմմա Ջանինյան

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 1586/21 1660139739

Date 23.02 2021